«ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲԸ

ք.Երևան 375012 Բուզանդի 1/4
Հեռ.54-17-89,54-51-89
«Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510004597930100 ՀՎՀՀ 02504913
էլ.փոստ. yerqaxluys@yerevan.am

681 N 1229

«17» 10 2022թ.

«ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝
Տ. ՔՅՈՒՖԱՐՅԱՆԻՆ
էլ. փոստ՝ galoper@autogroup.am

Համաձայն «Երքաղլույս» ՓԲԸ-ի և «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի միջև հորատման մեքենայի մատակարարման նպատակով 2022թ-ի մայիսի 23-ին կնքված թիվ «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-22/6» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2022թ-ի սեպտեմբերի 07-ի թիվ 511 գրության համաձայն, «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների հետ համատեղ, 2022թ-ի հոկտեմբերի 04-ին, իրականացվել է հորատման մեքենայի փորձարկում, ըստ որի, Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պայմանի՝ 2(երկու) մետր հորատման խորությունը VI կարգի գրունտում փաստացի չէր ապահովվել:

Վերոհիշյալով պայմանավորված «Երքաղլույս» ՓԲԸ-ի պատասխանատու ստորաբաժանման կողմից Հորատման մեքենայի տեխնիկական բնութագրի մասով տրվել է բացասական եզրակացություն: Հետևաբար հիմք ընդունելով Պայմանագրի 5.2 կետը, «Երքաղլույս» ՓԲԸ-ին 2022թ-ն սեպտեմբերի 07-ին ներկայացված N 01 հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվել:

«Երքաղլույս» ՓԲԸ-ն, 2022թ-ի հոկտեմբերի 06-ի թիվ 68/1177 գրությամբ, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 և 2.2.4 կետերը, «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ին ծանուցել էր հորատման մեքենան, մինչև ներառյալ 2022թ-ի հոկտեմբերի 14-ը, Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան որակի հորատման մեքենայով, անհատույց փոխարինելու համար:

«ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից, սահմանված ժամկետում, այն է՝ մինչև ներառյալ 2022թ-նի հոկտեմբերի 14-ը, հորատման մեքենան Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան որակի հորատման մեքենայով չի փոխարինվել և չի մատակարարվել:

Տեղեկացնումն ենք, որ «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից խախտվել են Պայմանագրի էական պայմանները:

Ուստի հիմք ընդունելով 2022թ-ի մայիսի 23-ին կնքված թիվ «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-22/6» Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի ա) ենթակետը՝ «Երքաղլույս» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-22/6» պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը Մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 1510004597930100 հաշվեհամարին փոխանցել 353200(երեք հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ՝ որպես յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա դիմաց տույժ՝ «ԵՔԼ-ԳՀԱՊՁԲ-22/6» Պայմանագրի 6.2 կետի համաձայն, սկսած 17.08.2022թ-ց մինչև 07.09.2022թ-նը ներառյալ, թվով 16 աշխատանքային օրերի համար և 220750(երկու հարյուր քսան հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն:

Ինչպես նաև, «Երքաղլույս» ՓԲԸ-ի «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ում բացված 1510004597930100 հաշվեհամարին, որպես երաշխիքային ապահովում, ենթակա է վճարման 4415000(չորս միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովում և 6622500(վեց միլիոն վեց հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես որակավորման ապահովում, այլապես «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում, Բանկային երաշխիքի տեսքով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կներկայացվեն երաշխիքները թողարկած բանկ՝ բանկային երաշխիքներով սահմանված 4415000(չորս միլիոն չորս հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամը և 6622500(վեց միլիոն վեց հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը «Երքաղլույս» ՓԲԸ-ի բանկային հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից, ոչ ուշ, քան գնումների օրենսդրությամն սահմանված 10 օրացուցային օր ժամկետի ընթացքում՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում և այդ ժամկետում, պայմանագրի կատարման

ապահովման, որակավորման ապահովման և հաշվարկած տույժի գումարները վճարելու դեպքում, «ԳԱԼՈՊԵՐ» ՍՊԸ-ի նկատմամբ չի նախաձեռնվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

ՏՆՕՐԵՆ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Կատարողներ Ա. Անանյան
Ա. Մինասյան
Հեռ. 010 54 39 80